# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/84»

ք. Երևան «14» «հուլիսի» 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Հ.ԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Արամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ուսումնասիրության և գնահատման** աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1400000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ

պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության աշխատակազմը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | Հ.ԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք.Երևան, Անդրֆեդերացիայի 1-ին նրբ. 14 տուն |
| Կենտրոնական գանձապետարան | Ինեկոբանկ ՓԲԸ |
| ՀՀ 900012000437 | Հ/Հ 2052022079861001 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00431266 |
| Է.Կիրակոսյան ---------- | Հ.Արամյան---------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

Հավելված N 1
"16» «հուլիսի» 2020թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/84» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Բազմաբնակարան շենքերի թվով մինչև 55 հարթ տանիքների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և կրողունակության գնահատում**

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հասցեն | նախընտրելի ժամկետը** |
| 1 | 71331500 | ներկայացված է ստորև | դրամ | 1400000 | 1 | Երևան քաղաքի՝ թվով 11 վարչական շրջաններ, բացառությամբ Նորք-Մարաշի | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ օրացուցային 45-րդ օրը |

***Գնաառաջարկները ներկայացնել հաշվի առնելով, որ հաղթողը ազատվելու է ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարելուց, քանի որ «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի դրամաշնորհը ազատված է ԱԱՀ-ից համաձայն՝ ՀՀ կառավարության 30 ապրիլի 2015 թվականի N 445-Ն որոշման:**

## 1. Ներածական

Երևանի քաղաքապետարանը՝ ԵՄ աջակցությամբ, Երևան քաղաքի ավագանու N-111-Ա 13.02.2018թ. որոշմամբ իրականացնում է «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է՝ նվազեցնել էներգիայի սպառումը և ջերմոցային գազերի արտանետումները (մոտավորապես 844 տոննա CO2 տարեկան), վերականգնվող էներգիայի աղբյուրների և Երեւանի բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետության միջոցների կիրառման միջոցով: Ծրագրի շրջանակներում բազմաբնակարան բնակելի 90 շենքերի տանիքներին նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր, որոնք կապահովեն վերելակների շահագործման, ինչպես նաև ընդհանուր օգտագործման տարածքների, այդ թվում շենքերի մուտքերի բոլոր հարկաբաժինների լուսավորության, բակային լուսավորության էլեկտրաէներգիայի պահանջարկը: Էլեկտրաէներգիայի ավելցուկը կփոխանցվի Հայաստանի էլեկտրական ցանցին: Կստեղծվի նաև LED լամպերի վրա հիմնված լուսավորման համակարգեր վերոնշյալ 90 շենքերում:

Ծրագրի իրականացման համար Քաղաքապետարանը յուրաքանչյուր վարչական շրջանում առանձնացրել է բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնք համընկնում են Ծրագրի տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչներին, որոնց միջև կրկին կատարվելու է ընտրություն՝ արդեն ըստ տեխնիկական չափորոշիչներին համապատասխանության:

Թեկնածու շենքերը ենթարկվելու են տեխնիկական զննության՝ գնահատելու դրանց տանիքների վնասվածության աստիճանն ու դրանց կարողությունը՝ կրելու արևային ՖՎ կայանի հավելյալ բեռը: Տվյալ զննության արդյունքների հիման վրա էլ ընտրվելու են այն շենքերը, որոնք ներառվելու են «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրում:

Վերը նշված մասնագիտական ծառայությունների ձեռքբերման նպատակով Երևանի քաղաքապետարանը հայտարարել է սույն մրցույթը:

## 2. Առաջադրանքի նպատակը

Առաջադրանքի նպատակն է կատարել Երևան քաղաքի 9-14 հարկանի թվով մինչև 55 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և կրողունակության գնահատման, ճշտել դրանց վնասվածության աստիճանն ու տեխնիկապես հիմնավորել այդ շենքերի տանիքների վրա արևային ՖՎ սարքավորումների տեղադրման հնարավորությունը և սխեմատիկ նախագծային լուծումները:

Ուսումնասիրության ենթակա շենքերի ցանկը կներկայացվի հաղթող ճանաչված ընկերությանը՝ շենքերի ընտրության գործընթացի ավարտից հետո, որից հետո կազմակերպությունը պետք է ներկայացնի աշխատանքի և վճարումների պլան և ստորագրի համաձայնագիր Երևանի քաղաքապետարանի հետ: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պայմանագիրը կմտնի ուժի մեջ վերը նշված համաձայնագրի ստորագրումից հետո:

## 3. Առաջադրանքի խնդիրները

Սույն առաջադրանքի խնդիրներն են՝

1. Տալ վերոնշյալ թվով մինչև 55 բազմաբնակարան շենքի ընդհանուր նկարագրությունը, ներառյալ՝ հասցեն, ֆիզիկական բնութագրերը, կառուցվածքային տիպայնությունը (երկաթբետոնե շրջանակակարկասային, երկաթբետոնե հավաքովի պանելային և այլն), շենքի շինհրապարակի սեյսմիկ գոտին, շինարարության ժամանակահատվածը, նախագծման և շինարարական լուծումները, մասնավորա պես տանիքի/վերնածածկի նկարագիրը, այդ թվում՝ ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումները:
2. Ներկայացնել շենքի/առանձին տարրերի շինարարական թերությունների և կառուցվածքային վնասվածքների մանրամասն նկարագրությունը, բնութագրել ներկայիս վնասվածքների հնարավոր պատճառները և գնահատել շինարարական համակարգի տեխնիկական վիճակը՝ գործող շինարարական նորմերի և վնասվածության աստիճանի համաձայն:
3. Ներկայացնել շենքի տանիքի/վերնածածկի առկա վնասվածքների նկարագրությունը, դրանց գոյացման պատճառը և կրող կոնստրուկտիվ համակարգի առկա տեխնիկական վիճակը:
4. Տալ շենքի տանիքի ջրամեկուսիչ շերտի ընդհանուր նկարագիրը, նշելով առկա վնասվածքները և դրանց առաջացման հնարավոր պատճառները: Անհրաժեշտ է կցել լուսանկարներ, գծագրեր, հատակագծեր, սխեմաներ և այլ գրաֆիկական պատկերներ:
5. Հետազոտված շենքերի տանիքածածկի տարրերի լուծումների, վիճակի բնութագրերի արձանագրված առանձնահատկությունների համալիր վերլուծությամբ, նրանցից յուրաքանչյուրի համար տեխնիկապես հիմնավորել արևային ՖՎ կայանի սարքավորումների տեղադրման հնարավորությունը՝ հաշվի առնելով դրանց կողմից հավելյալ բեռնվածքի ազդեցությունը՝ մոտավորապես ընդհանուր 3 տոննա կամ 34 կիլոգրամ յուրաքանչյուր քառակուսի մետրի վրա, ինչպես նաև քամու ազդեցությունից առաջացվող դինամիկ բեռնվածքները:
6. Աշխատանքներն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է հաշվի առնել հետևյալ օրենսդրական կարգավորումներն ու տեխնիկական պահանջները.

   - ՀՀ կառավարության որոշումը (N 596-Ն, 19.03.2015թ.)
   - Վերոնշյալ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության հետևյալ որոշումները՝ N 774-Ն (02.07.2009), N 775-Ն (02.07.2009), N 777-Ն (02.07.2009), N 510-Ն (07.04.2011), և N 596-Ն (19.03.2015):

Հետազննությունը պետք է իրականացվի և համապատասխան եզրակացությունը կազմվի ու փաստաթղթավորվի՝ համաձայն ազգային ստանդարտների և նորմատիվատեխնիկական կանոնակարգերի:

## 4. Վայրը

Շենքերը տեղակայված են Երևանի տարբեր վարչական շրջաններում: Կապալառուն այցելություններ կունենա օբյեկտներ: Ընտրված կապալառուի առաջին այցը դեպի օբյեկտներ կկազմակերպվի ԵՔ ներկայացուցիչների կողմից: Կազմակերպության հետագա աշխատանքային այցերին կարող են ներկա լինել ինչպես ԵՔ ներկայացուցիչներն այնպես էլ ԵՄ աջակցող խմբի (CoM-DeP Support Team) փորձագետը:

## 5. Ժամանակացույցը

Ծառայությունը պետք է մատուցվի 25-րդ օրը՝ երկու կողմերի միջև պայմանագրի ստորագրման օրվանից սկսած, ստորև նշված արդյունքների հիման վրա:

## 6. Արդյունքների նկարագրությունը, ձևաչափը և լեզուն

| Աշխատանքի արդյունքների նկարագրություն | Ձևաչափ | Լեզու |
|---|---|---|
| Յուրաքանչյուր շենքի համար տեխնիկական վիճակի հետազննության և կրողունակության վերջնական եզրակացությունը, ներառելով սխեմատիկ նախագծային լուծումները և տեղադրման խոշորացված նախահաշվային արժեքը | Doc, PDF, տպագիր (կնքված և ստորագրված) ու էլեկտրոնային | հայերեն |

## 7. Համակարգմանն առնչվող հարցեր

Կազմակերպությունը կիրականացնի իր առաջադրանքները Երևանի Քաղաքապետարանի կոնտակտային անձանց հետ սերտ համագործակցությամբ և համակարգմամբ, համաձայն Ծառայությունների մատուցման պայմանագրի կոնտակտային տվյալների:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## Բազմաբնակարան բնակելի շենքի հարթ տանիքի վրա ՖՎ կայանի հավելյալ բեռի տեղադրման հնարավորության վերաբերյալ [հասցե] հասցեում գտնվող բնակելի շենքում

Սույն եզրակացությունը տրվում է [համար] համարով և [ամսաթիվ] թվակիր Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի համաձայն, «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվում է շենքի տանիքին կառուցել մինչեւ 10 կվտ հզորությամբ արևային ՖՎ կայան, որը կառաջացնի շուրջ 2-3 տոննա լրացուցիչ ծանրաբեռնվածություն, մեկ քառակուսի մետրի համար մոտ 34 կգ:

[Ընկերության իրավաբանական անվանում] իրականացրել է [հասցեում] բնակելի շենքի [մեթոդներ, տեսողական ուսումնասիրություն, չափումներ և լուսանկարներ]:

## Շենքի ծավալահատակագծային լուծումները

[Հասցե] հասցեում գտնվող բազմաբնակարան շենքը բաղկացած է [հարկերի քանակը] հարկերից, [մուտքերի քանակը] մուտքերից, ունի նկուղային և ոչ բնակելի հարկ, որպես վերջին հարկ [ջնջել, եթե կիրառելի չէ]:

Շենքը ունի ուղղանկյուն դասավորություն, [չափսը, օրինակ 10 * 20 մետր] չափսեր և հարկերը ունեն [բարձրությունը, մետր] բարձրություն: Շենքի հիմնակմախքն իրականացված է [շենքի հիմնախմախքի տիպը, այս դեպում պանելային] կոնստրուկցիաներից:

Շենքը կառուցվել է [ամսաթիվ], Առաջին հարկի հատակի նիշը [բարձրությունը, մետր] բարձր է շենքի սալվածքից:

## Շենքի կոնստրուկտիվ լուծումները

Շենքի կոնստրուկտիվ լուծումը [նշել տիպը]:
Շենքի կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

- Շենքի հիմքը՝
- Հիմնական հեծանները/սյուները՝
- Շենքի պարփակող պատերը/միջնորմները՝
- Սանդուղքները՝
- Տանիքը [ներառյալ սալվածքը]՝:

## Եզրակացություն

[Հասցե] հասցեում գտնվող շենքի կրող կոնստրուկցիաների վնասվածքներ, ձևախախտումներ, անթույլատրելի ճաքեր չկան: Պատերի, բարավորների, ծածկերի, սանդուղքների կոնստրուկտիվ տարրերի տեխնիկական վիճակը բավարար է: Բացակայում են հիմքերի անհավասարաչափ դեֆորմացիաների նշաններ: Շենքի ընդհանուր կոնստրուկտիվ համակարգում չկան նրա շահագործման հուսալիության վրա ազդող վնասվածքներ և թերություններ:
Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի տեխնիկական վիճակի հետազոտման» մեթոդական ցուցումների՝ [հասցե] հասցեում գտնվող շենքի տեխնիկական վիճակը գնահատվում է [ընտրել՝ լավ, բավարար, ոչ բավարար, վթարային, քանդված վիճակում] (Հավելված 1):
Ելնելով տեխնիկական վիճակից և սեյսմակայունության տեսանկյունից [հասցե] հասցեում գտնվող շենքի տանիքին կարելի է տեղադրել արեևային ՖՎ կայան՝ մինչեւ [կիլոգրամ] կգ ընդհանուր քաշով, մեկ քառակուսի մետրի համար մոտ [կիլոգրամ] կգ:
[Նշել բարելավման առաջարկություններ]:
[Ներկայացնել բացատրություն և պարզաբանումներ, եթե որոշվում է, որ բազմաբնակարան բնակելի շենքի հարթ տանիքի վրա ՖՎ կայանի հավելյալ բեռի տեղադրման եզրակացությունը բացասական է]:

**Հավելված 1 – Շենքերի վնասվածության աստիճան**

| Մաշվածության աստիճանը, $Φ_2$ | Մաշվածության տոկոսը | Տեխնիկական վիճակի գնահատականը | Տեխնիկական վիճակի ընդհանուր բնութագիրը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | մինչև 20 | լավ է | Վնասվածքներ և դեֆորմացիաներ չկան, կան առանձին մանր թերություններ, որոնք հնարավոր է վերացնել ընթացիկ նորոգման ժամանակ և որոնք չեն ազդում կոնստրուկտիվ տարրերի շահագործման վրա: Կապիտալ նորոգում կարող է կատարվել միայն առանձին տեղամասերում, որոնք ունեն բարձր մաշվածություն |
| 2 | 21-40 | բավարար է | Կոնստրուկտիվ տարրերը ընդհանրապես պիտանի են շահագործման համար, բայց պահանջում են որոշ կապիտալ նորոգում, որն ամենաանհրաժեշտն է տվյալ պահին |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | 41-60 | անբավարար է | Կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո |
| 4 | 61-85 | վթարային է | Կրող կոնստրուկտիվ տարրերի վիճակը վթարային է, ոչ կրող տարրերինը՝ խարխուլ է: Կոնստրուկտիվ տարրերի՝ իրենց ֆունկցիաների սահմանափակ կատարումը հնարավոր է միայն պաշտպանական միջոցառումների կատարումից կամ կոնստրուկտիվ տարրերի լրիվ փոխելուց հետո |
| 5 | 86-100 | քանդված վիճակում | Կրող կոնստրուկտիվ տարրերը գտնվում են քայքայված, մասամբ կամ լրիվ փլված վիճակում |

**ԳՆՈՐԴ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012000437
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
Հ.ԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ
ք.Երևան, Անդրֆեդերացիայի 1-ին նրբ. 14 տուն
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2052022079861001
ՀՎՀՀ 00431266

Հ.Արամյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«14» «հուլիսի» 2020 թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/84» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | |
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 4861 | Բազմաբնակարան շենքերի թվով մինչև 55 հարթ տանիքների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և կրողունակության գնահատման | ... | 1400000 | 1400000 | 1400000 | 1400000 | 1400000 | 1400000 | 1400000 |

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012000437
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
Հ.ԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ
ք.Երևան, Անդրֆեդերացիայի 1-ին նրբ. 14 տուն
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2052022079861001
ՀՎՀՀ 00431266

Հ.Արամյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 3*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Հավելված 4.1**
**«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/84»* ծածկագրով**
**գնանշման հարցումի հրավերի**

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(որակավորման ապահովում)**

ք. Երևան «_____» հուլիս 2020թ.**

Հ.ԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Հովհաննես Արամյանի / ն/թ 000048025/
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/84* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու

դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ՀԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ

ընկերության անվանումը

քԵրևան, Անդրֆեդերացիայի 1-ին նրբ 14 տուն

ընկերության հասցեն

Ինեկոբանկ ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Կ.Տ

—/07/2020թ

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*** |
| 2. Թիվ | |
| 3. | Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ Հ.ԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ Ինեկոբանկ ՓԲԸ | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ 2052022079861001 | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00431266 | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108 | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429 | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1400000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ /AMD/ | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)* | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/84 | |
| 19. Վճարման պայմանները՝ | <ակցեպտավորված վճարում> |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>22.բ. Կ.S. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>21.բ. Կ.S. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.S.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.S.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

**Հավելված 5.1**
**«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/84»* ծածկագրով**
**գնանշման հարցումի հրավերի**

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի ապահովում)**

ք. Երևան «_____» հուլիս 2020թ.**

Հ.ԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Հովհաննես Արամյանը / ն/թ 000048025/
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 3. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/84* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Հ.ԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ

ընկերության անվանումը

քԵրևան, Անդրֆեդերացիայի 1-ին նրբ 14 տուն

ընկերության հասցեն

Ինեկոբանկ ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2052022079861001

ընկերության բանկային հաշվեհամարը

00431266

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Հովհաննես Արամյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

——/07/2020թ

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*** |
| 2. Թիվ | |
| 3. | Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ Հ.ԱՐԱՄՅԱՆ ՍՊԸ | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ Ինեկոբանկ ՓԲԸ | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ 2052022079861001 | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00431266 | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108 | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429 | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ /AMD/ | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի ապահովման համար)* | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/84 | |
| 19. Վճարման պայմանները՝ | <ակցեպտավորված վճարում> |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>22.բ. Կ.S. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>21.բ. Կ.S. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.S.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.S.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |